

ՍՏՈՒԳԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (ՀԱԲ) լույս է տեսել շուրջ կես դար առաջ (1926—1935 թթ.), սակայն այսօր էլ մնում է որպես մի անփոխարինելի հանրագիտարան հայոց լեզվի ու պատմության մասնագետների համար: Աշխարհի ոչ բոլոր ժողովուրդներն ունեն իրենց լեզվի արմատների կամ բառերի ծագման վերաբերյալ նման մի տեղեկատու ձեռնարկ: Հ. Աճառյանի ՀԱԲ-ը հայ ժողովրդի լեզվաբանության նվաճումների հանրագումարն է, որովհետև այն հենվում է բազմաթիվ լեզվաբանների երկար տարիների տրեւոյան արդյունքների վրա:

ՀԱԲ-ի լույս ընծայումից հետո հայ և օտար լեզվաբաններ կատարել են բազմաթիվ ստուգաբանական վերլուծություններ, որոնք գալիս են լրացնելու և նոր լույս սփռելու ՀԱԲ-ում տրված մի շարք բառերի քննության վրա:

Մեր կողմից ներկայացվող լրացումներն ու ճշգրտումները հիմնականում վերաբերում են հայերենի՝ իրանական լեզուներից (պահլավերեն, պարսկերեն), սեմական լեզուներից (ակկադերեն, արաբերեն) կատարած փոխառություններին և զուգահեռներին, որոնք քաղված են նոր և նորագույն աղբյուրներից:

1. դանգալախ

ՀԱԲ-ի հրատարակումից հետո Հ. Աճառյանը շարունակում էր ստուգաբանական աշխատանքները, որի ապացույցներից մեկն էլ նրա կողմից հրապարակված «Հայկականք» շարքն է: «Հայկականք» վերջին՝ 74-րդ բառը դանգալախ-ն է, որ գործածվում է Բյուզանդիայի մի շարք բարբառներում և հատկապես Պոլսի ու նոր Նախիջևանի հայոց բառապաշարում: ԴԱՆԳԱԼԱԽ-ը Պոլսի բարբառում գործ էածվում «տխմար, բթամիտ, ապուշ, ոչնչություն», իսկ նոր Նախիջևանի բարբառում՝ «զրսեցի, ոչ նախիջևանցի հայ» նշանակություններով¹: Թվում է, թե Հ. Աճառյանը ճիշտ հետքերի վրա է, երբ գրում է. «Այժմ Պոլսի թուրքերենով հնչվում է dangalaq և նշանակում է «տխմար, բթամիտ»: Նույնը փոխ են առել Պոլսի հայերը նույն իմաստով և հնչում են դանգալախ (dangalax): Կարծում եմ, թե այս բառը գոյություն ունի նաև հրեմի թաթարերենում dangalax ձևով, որ նույն տեղի հայերն էլ փոխ են առել նրանցից...»²: Սակայն, չգիտես ինչու, Հ. Աճառյանը ենթադրում է, որ այս բառը հայերեն է և ձևափոխված է տաճ գլուխ բառից, որ նշանակում է «մեծատառ, գլխատառ»: «Մեծատառ» կամ «գլխագիրը» իբրև խոշոր բան, արհամարհական իմաստ է ստացել. օր.՝ Տան գլուխ ե՞ս, ինչ է. իբր թե խոշոր, բայց անօգուտ մի բան ես: Եվ այս նախատական իմաստով հայերենից անցել է թուրքերենին: Բացի Պոլսից և հրեմից, ուրիշ տեղ թուրքական բարբառներում գոյություն չունի այս բառը և թուրքական արմատներով էլ չի բացատրվում³: Իսկապես, ճիշտ է, որ այս բառը թուրքական արմատներով չի բացատրվում և հետևաբար թուրքերենով չի կարող մեկնվել, սակայն «Պոլսից և հրեմից բացի ուրիշ տեղ թուրքա-

1 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Երևան, 1971—1979, հ. 4, էջ 674 (այսուհետև՝ ՀԱԲ):

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

կան բարբառներում գոյություն չունենալու»⁴ եզրակացությունը արդյունք է միայն երկու բառարանների տված տեղեկություններով սահմանափակվելու փաստի, այն է՝ հեղինակի հիշատակած Բուդաղովի բառարանի, իսկ վերջինս էլ հենվում է Հինդոլուի բառարանի վրա. Աբիկյանի. Ջեֆիի բառարանները չեն արձանագրել այս բառը որպես միայն Պոլսի թուրքերենին հատուկ բառ, այլ նաև որպես ընդհանուր թուրքերենի բառապաշարի մեջ մտած մի բառ: Այս իրողությունն ապացուցվում է նաև այլ բառարանների տվյալներով: Այսպես օրինակ, 1931 թ. Մոսկվայում հրատարակված Մազազանիկի «Թուրքերեն-ռուսերեն բառարան»⁵ ձանգալ-ը բացատրում է. 1. «անկիրթ, կոպիտ», 2. անշան մարդ, փալաս, ոչնչություն, ապուշ», իսկ 1959 թ. Անկարայում լույս տեսած «Թուրքերենի բառարան»⁶ և, որն ավելի է կարևոր, 1968 թ. Սոֆիայում լույս տեսած «Թուրքերեն խոսակցական բառարան» (որն ապացույց է այս բառի նաև բուլղարական թուրքերի խոսվածքներում գործածական լինելուն) և թուրքերենի այլ բառարաններ անխտիր ունեն այս բառը⁷:

Այնուհետև, թուրքերեն ձանգալ-ի ծագման ակունքը ոչ թե հայերենի ՏԱՆ ԳՆՈՒՆ-ն է (կամ ԴԱՆ ԳՆՈՒՆ-ը), այլ պարսկերենի dāngāl-ը, որն ունի 1. «հիմարացած, եղջյուրավոր, խաբված ամուսին, տխմար», 2. «զգվելի, գարշելի, սարսափելի, բռն» նշանակությունները⁸: Այսպիսով, պարսկերենի dāngāl-ից թուրքերենի -ak ածանցի հավելմամբ կազմվել է dangalak-ը (համար. թուրքերենի cıylak «մերկ, տկուր», dudak «շրթունք», topak «գունդ, կլոր, փքված, թմբիկ» և այլն):

2. զաղալ

Հայերենում գործածվող զաղալ «նենգ, խաբեբա, խարդախ» բառի մասին, որ հանդիպում է Ն. Մառի հրատարակած Վ. Այգեկցու առակների հետևյալ հատվածում. «Թե՛ զաղալ մարդն, և զխալպն, և զգողն...»⁹, ՀԱԲ-ը թեականորեն գրում է. «Կա պարսկերեն dayal «կեղծ», որ այժմ էլ գործածական է Կովկասի հայոց բարբառներում դաղալ ձևով և «խարդախ», նենգ» իմաստով. արդյոք վերինն էլ նույն բառն է և պետք է ուղղել դաղալ»¹⁰:

Պետք է ասել որ զաղալ-ը սխալ գրության արդյունք չէ և գոյություն ունի իսկ արաբերենում. zāğal արմատից ունենք zagala «խարդախել, կեղծել», zağal 1. «խարդախ, նենգված, կեղծված», 2. «խաբեբայություն, կեղծիք»¹¹ բառերը, որոնցից վերջինն էլ հիմք է հանդիսացել հայերեն զաղալ-ի փոխառության համար: Հիշեցնենք, որ զաղալ-ը գործածական բառ է եղել նաև հայերենի բարբառներում: Այսպես, օրինակ, Սվեդիայի բարբառում զէղուլ կամ զաղուլ նշանակում է «նենգ, խարդախ», իսկ գազալուտէն կամ զէղէլուղէն «նենգություն, խարդախություն»¹²:

Այսպիսով, պետք է ենթադրել, որ հայերենի համար խորթ չեն եղել երկու ձևերն էլ. դաղալ-ը փոխ է առնվել պարսկերենից, ուր գտնում ենք dayal «խաբեբա, սրիկա, նենգ, խարդախ, խորամանկ»¹³ բառը, որն ունեցել է անշուշտ նաև զաղալ տարբերակը, իսկ զաղալ-ը՝ արաբերենից, ինչ ապացուցում են

⁴ Турецко-русский словарь. М., 1931, с. 223. Türkçe sözlük. Ankara, 1959, S. 123. Türkçe konuşan sözlük. Sofya, 1968, S. 127.

⁵ Персидско-русский словарь. Ч. 1, М., 1988, с. 668, (այսուհետև՝ ПРС):

⁶ Ն. Մառ. Ժողովածոյք առակաց Վարդանայ. Բ, ընդգրկը, Պետերբուրգ, 1894, էջ 131: էջ 131:

⁷ ՀԱԲ, 2, էջ 77:

⁸ X. K. Баранов. Арабско-русский словарь. М., 1962, с. 415, (այսուհետև՝ АРС).

⁹ Տ. Անդրեասյան. Սվեդիայի բարբառը. Երևան, 1951, էջ 215:

¹⁰ ПРС, 1, с. 604. Տե՛ս նաև М. Г. Асланов. Афганско-русский словарь (пушту).

М., 1963, с. 404, որն ունի dayal ձևը (այսուհետև՝ АФС).

նաև արաբերենի հարևանությամբ գոյություն ունեցող բարբառների ձևերն էլ: Ուստի, երկու ձևերի գոյության փաստը հայերենում այլևս կասկած չի կարող հարուցել:

3. Բամ

2. Աճառյանի ՀԱԲ-ում Բամ պակաս, նվազ, քիչ, փոքր ինչ» բառը չի ներկայացված, թեև հիշատակվում են ածանցված Բամական «մանկական», ինչպես նաև Բամանել «արհամարհել» (ուղիղ ձևը՝ Բամանել) բայական ձևերը, որոնց հիմքում Բամ արմատն է¹¹: Այս Բամ արմատը կամ բառը գիտեն բազմաթիվ բարբառներ, որոնցից քաղելով զետեղել է նա իր «Գավառական բառարանում» հետևյալ բացատրություններով՝ Բամ (Ակնում) — «տկար, թույլ օղի, թորակին ետին վազուքը», 2. Չենկիլերում՝ «լավ շեփած (Բամ հաց)», 3. Չենկիլերում՝ «տկար, թույլ (կրակ), օր. Բամ կրակով եփե՛ր է, իսկ Կաբինում և Քղլում՝ Բամագլ «քիչ մը գուլ, գաղջ» կամ Բամագլիկ Չենկիլերում» և այլն¹²:

Բառս անկախ գործածությամբ բազմիցս վկայված է միջնադարի հայ գրականության մեջ, ինչպես օրինակ՝ «Պատմություն Ֆարման մանկան» պոեմում. «...Մի տեսնուլ Բամ, ու զիմ սէրս ի քո սիրտդ խնդալով տամ»¹³, ուր գործածված է «մի քիչ, քիչ» նշանակություններով, քանի որ հատվածն ընկալվում է «մի քիչ տեսնել» նշանակությամբ: Այնուհետև բառս գործածական է եղել նաև նոր Ջուղայի բարբառում, ինչպես տեղեկանում ենք 2. Տեր-Դավթյանի (Ջուղայեցու) Հաշվետումարի Բամ տալ «նվազեցնել, պակասեցնել, հանել» արևահայտությունից, օրինակ. «Տանեմ էն յիրեսումն Բամ կուտամ» («Կտանեմ մյուս էջում կպակասեցնեմ») կամ կհանեմ, կնվազեցնեմ, «Քամ չէ տված» «Չի հանած, չի նվազեցված, չի պակասեցված»¹⁴: Ե. Մեղրեցու բառարանն ունի Բամական «մանկական», որի հավելվածականում Փեշտալչյանը ճիշտ նկատում է վերջինիս պարսկերենի کام բառից ծագելը¹⁵: Մինչդեռ Բամ-ը գիտակցվել է ոչ միայն բարբառներում և միջին հայերենում, այլև դասական շրջանում, ինչպես վկայում են նրանով բարդված, ածանցված Բամանել «արհամարհել» (բառացի՝ «նվազ, քիչ, պակաս, մոտիկ լինել, նվազ մերձենալ» Բամ և հաճ «կից, մոտ» բառերից, ուստի Բամանել-ը սխալ ձև է, թեև ավելի շատ տարածված գրաբարում, իսկ նոր ժամանակներում Բամանել, Բամանելանք, ինչպես արձանագրում է «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանը»¹⁶, Բամանվան «չհավանող» դժվարահաճ՝ Բամ և հալան բառերից, որն ընկալվում է «նվազ, պակաս, քիչ հավանող» նշանակությամբ և ոչ թե Բիմ և հալան բառերից, ինչպես սխալմամբ բացատրվել է այն մինչև հիմա: Որ Բամանվան բառում Բմ-ը (Բամ-ից) հանդես է գալիս ժխտական ածանցի կամ բառի արժեքով, ցույց է տալիս նրան փոխարինող շմանավան-ը, որն այսօր էլ մեծ տարածում ունի մի շարք բարբառներում (Թբիլիսի, Երևան), ինչպես նաև ժամանակակից խոսակցական-գրական լեզվում¹⁷:

Ինչ վերաբերում է Բամ բառի ժխտական, բացասական մասնիկի վերածվելուն, ապա աչքի առջև ունենալով իրանական լեզուներում նույնպես նրա՝ բառից ածանցի վերածվելու երևույթը, ինչպես օրինակ՝ պարս. کام «քիչ, նվազ, պա-

11 ՀԱԲ, 4, էջ 548:

12 2. Աճառյան. Գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1093:

13 Պատմություն Ֆարման մանկան. Երևան, 1957, էջ 153, տող 939—940:

14 Ջուղայեցի 2. Տեր-Դավթյանի հաշվետումարը. Երևան, 1985, էջ 185, 263, 415:

15 Ե. Մեղրեցի. Բառգիրք հայոց. Երևան, 1979, էջ 329: Տե՛ս նաև ՀԱԲ, 4, էջ 548:

16 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. 4, Երևան, 1980, էջ 704 (այսուհետև ԺՀԲԲ), նաև ՀԱԲ, 4, էջ 548:

17 Տեր-Ալեքսանդրյան. Թբիլիսիի մտավոր կյանքը. Ա, Թիֆլիս, 1984, էջ 303: ԺՀԲԲ, 4, էջ 138:

կաս, ան-, չ-, ոչ», փուշտու՝ kam պակաս, նվազ, քիչ, փոքրիկ, աննշան, երեխա», kam'in, հոգն. kam'kay «փոքրիկ, երեխա, երեխաներ», kambaxt «անբախտ, նվազ բախտավոր, ոչ բախտավոր», kamrang «առնույն, դժգույն», kamfahmi «ապուշ», kamzor «անզոր, թուլ, նվազ ուժով, ոչ ուժեղ», kamiavdi «պակասեցնել, նվազեցնել, կրճատել, մեղմել, ցածրացնել» և այլն¹⁸, թվում է ոչ անհիմն ենթադրել, որ մինչև փոխառությունը, այդ նշանակություններն արդեն գիտակցվում էին:

4. գոգ/գուգ «ընկույզ»

Հ. Աճառյանը ՀԱԲ-ում հայերեն ընկույզ և գոգ/գուգ բառերի ծագման վերաբերյալ եղած կարծիքները ամփոփելով եզրակացնում է. «Բառս գտնվում է Առաջավոր Ասիայի շատ լեզուների մեջ ... Բայց այս ձևերից ոչ մեկը չի կարող հայերենի մայր համալսվի: Հնդհավառակը շատերը կարող են բացատրվել հայերենով¹⁹, Պարզ չէ, թե մյուս լեզուների «ընկույզ» իմաստի հիմքի համար Հ. Աճառյանը հայերենի ո՞ր ձևերը նկատի ունի՝ բարբառային-արմատական, թե՞ ածանցյալ՝ գրաբարյան: Ինչպես հայտնի է, գրաբարյան ընգոյզ և ընկույզ ձևերի դիմաց հայերենի մի շարք բարբառներ ունեն գյոգ (վան), գուգ (Ալաշկերտ), գիւգ (Մոկս), գյոգ (Շատախ), իսկ մնացյալները՝ ունգուգ, ինգոգ, անգուգ, օնգուգ, նրնգուգ հնչապատկերը²⁰:

Հարևան լեզուներում գտնում ենք հետևյալ ձևերը. պարսկ. gūz, gavz, քրդ. gūz, guiz, goviz, արաբ. gavz, ասոր. gauza, երբ. օգծ, օսկթ ānguzā, ānguz, վրաց. իմերել. niḡozl և այլն²¹:

Մեր կարծիքով բառս ունի հնդիրանական ծագում և ոչ հայկական, որովհետև ստուգաբանվում է իրանականների օգնությամբ: Առկա է նաև պահլավերենում gūč (gūz)²² ձևով: Այսպես, ավեստայի gaoz «ծածկել, թաքցնել» բառը (*+gauza-ից) տվել է aYōz ('gwez, Ywz) «ծածկույթ, պատյան» և սողերեն արձանագրությունների 'pYyz-(opYiz) «թաքնվել, ծածկվել» բողոք. 'pYwyz-(opYwez-) «թաքցնել», որոնք ենթադրվում են ըստ Գերշեյի համապատասխանորեն *apa-guzya և *apa-gauzaya ձևերից²³: Ընկույզը ի արող էր այդպես կոչվել կեղևով, պառլանով ծածկված լինելու պատճառով: Եվ իսկապես, Մ. Հ. Մուրադյանի վկայությամբ, Շատախի բարբառում գյոգ է անվանվում ընկույզի միջուկը, իսկ ընկույզը՝ կոֆյով²⁴, Այսինքն գյոգ-ը թաքնված մասն է: Ուրմիայի (Խոյի) բարբառում կյոգնիկ նշանակում է «գողտնի, թաքուն»²⁵, Երևանի և Արարատյան բարբառում գյոգերով դարձյալ նշանակում է «թաքուն, գողտնի, ծածուկ», որը ոչ մի կապ չունի թուրքերեն ցօզ «աչք» բառի հետ:

18 ПРС, 2, с. 346—347; АФРС, с. 688. Նաև տե՛ս Բառարան պարսկերէն, ըստ կարգի հայկական այբուբենի Ի Գէորգեայ Դպրէ Տէր Յովհաննէսեան. Կոստանդնուպօլիս, 1826, էջ 653—654:

19 ՀԱԲ, 2, էջ 130:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

22 Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան. Երևան, 1965, էջ 108:

23 Основы иранского языкознания. М., 1981, 2, с. 172, 187 (այսուհետև՝ ОИЯ).

24 Մ. Մուրադյան. Շատախի բարբառը. Երևան, 1962, էջ 69:

25 Մ. Ասատրյան. Ուրմիայի (Խոյի) բարբառը. Երևան, 1962, էջ 223:

5. փարչ

Հայերեն փարչ կամ փարջ չջրի սափոր, կուժ», չջրի փոքր կուժ», «կավե կամ պղնձե երկարավուն ունկավոր գավաթ» բառն ավանդված է միջնադարից (նաե փարչիկ ձևով)²⁶։ ՀԱՐ-ում Հ. Աճառյանը փարչ-ի ծագման հարցը թողնում է անորոշ, թեև հիշատակում է Ն. Ադոնցի մատնանշած պարսկերեն *pač* ձևը²⁷։ Մեղ թվում է, Ն. Ադոնցի ենթադրությունը հիմնավոր է և՛ հնչյունական անցումների, և՛ նշանակության տեսանկյունից, որովհետև, իրոք, այսօր էլ պարսկերենում գործածական է *pač*-ը «մեծ պղնձյա, բյուրեղյա կամ կավե անոթ ջրի համար (կուժի ձևի)» նշանակություններով²⁸։

6. նպերտ

Հայերեն նպերտ բառի ծագման հարցը ՀԱՐ-ում թողնված է անորոշ²⁹։ Թերևս դրա պատճառն այն է, որ հայ մատենագրության մեջ օգտագործվել է բառս ոչ իսկական նշանակությամբ և կամ տարբեր հեղինակների մոտ տարբեր իմաստներով է ընկալվել։ Այսպես՝ հիմք ունենալով Կաղանկատվացու հետևյալ հատվածը. «Անձնահաճ կամօք ըստ նպերտ բարուց Հայաստանեացն», ՆՀՐ-ի հեղինակները թարգմանում կամ բացատրում են նպերտ-ը «հպարտ, ամբարհաւաճ, անձնացոյց»³⁰, Առձեռն բառարանը՝ նպերտ, նպերտակաճ-ը «հպարտ, աղքատ հպարտ, հպարտի»³¹, իսկ Հ. Աճառյանը, վկայակոչելով Նույն հատվածը, բացատրում է. «հպարտ, ամբարտավան», ապա՝ նկատի ունենալով նաև Օրբելյանի հրատարակության հետևյալ հատվածի բովանդակությունը. «Հետ նպերտ բարուց ումանց որպէս թէ ճգնազգեաց և անապատասէր գոլով, կուտութիւն աշաց և ականջաց խոկացեալ՝ պատշաճ համարեցան բնակել ի վահս», գրում է. «այստեղ բառս «խոնարհ, պարկեշտ» նշանակություն ունի»³²։

Թեև ՀԱՐ-ը հիշատակում է նաև Հ. Թիրաքյանի ենթադրությունը պարսկերենի *nabard* բառի, խորխտ, սեգ՝ բառից, ի դեպ այս նշանակությունների ավելացնում է նաև «կռիվ, պատերազմ» բառերը³³, որոնք չկան «Արիահայ բառարանում»³⁴, սակայն մերժելու կամ հավաստելու վերաբերյալ ոչինչ չի ասում³⁵։

Հավանաբար պատճառը հնչյունական անցումներն են, որովհետև պարսկերենի *nābard*-ից (ամարտ, ճակատամարտ)³⁶ հայերենում սպասելի էր ներքեր կամ նաբարդ. իսկ քանի որ այդ հնչապատկերը չկա, այլ՝ նպերտ, ուստի փոխառությունն ավելի հին է, քանի որ պարսկերենը ձայնեղացնում է հին խուկերը։ Հենց պարսկերենն էլ օգնում է մեզ ճշտելու նպերտ-ի հայերեն իմաստը, որ բացի նշված հպարտ, ամբարտավան և այլնից ունի նաև ռաջ, կորովի» իմաստները։ Այսպիսով, նպերտ-ի բացատրության ընթացքում պիտի արձանագրվի նրա իրանական ծագումը, որն անտեսելու հիմքեր չկան։

26 ՀԱՐ, 4, էջ 490։ Տե՛ս նաև Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 4, էջ 642։

27 ՀԱՐ, 4, էջ 490. տե՛ս հղումը Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 486։

28 ПРС, 1, с. 260։

29 ՀԱՐ, 3, էջ 475։

30 Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Բ, Վենետիկ, 1837, էջ 453 (այսուհետև՝ ՆՀՐ)։

31 Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 626։

32 ՀԱՐ, 3, էջ 475։

33 Նույն տեղում։

34 Հ. Թիրաքյան. Արիահայ բառարան. Վիեննա, 1914, էջ 292։

35 ՀԱՐ, 3, էջ 475։

36 ПРС, 2, с. 627; Գ. Դպիրի «Բառարան պարսկերենն ունի նպերտ տառադարձությունը» տե՛ս Գ. Դպիր. Բառարան պարսկերեն, էջ 327։

7. փնթի

Հայերենի փնթի «կեղտոտ, թափթփված, զզվելի» բառի ծագման մասին խոսելիս Հ. Աճառյանը ենթադրում է այն «հայ. փին աղբ» և քի բառերից, իբրև աղբի թի», այսպիսի պատկերավոր բացատրություններ սովորական են ժողովրդական լեզվի մեջ՝ համառ. Պոլսի արդի հայ ժողովրդական բարբառով ֆաֆի ֆյուրեկ, հարկավորի, գործարանի կամ ֆենեֆի ավել...»³⁷. Այստեղ նա մասամբ կրկնում է ՆՀԲ-ի հեղինակների ենթադրությունը փնթի-ի փին աղբ» բառից ծագելու վերաբերյալ³⁸.

Փնթի-ն ավելի շուտ «թափթփված» և ոչ թե աղբի թիակ» նշանակությամբ է օգտագործվում: Նույն հայերենի հնչմամբ և նշանակությամբ առկա է բառս պարսկերենում՝ penti 1. «անպետք, ոչինչ, անճարակ», 2. «կեղտոտ, թափթփված, գարշելի» (մարդ) նշանակությամբ³⁹.

Եվ այսպես, պարսկերենի penti-ն համաձայն է հայերենի փնթի-ի հետ թե՛ արտահայտած իմաստներով, թե՛ հնչապատկերով: Բառիս ծագման վերաբերյալ ակադեմիկոս Գ. Ջահուկյանն առաջարկում է հ.-հ. հետևյալ նախաձևը՝ *phen-th-:⁴⁰

8. չիչ

Հայերենի չիչ «ստինք» բառը ՀԱԲ-ում տեղ է գրավել համաձայն Ե. Մեղրեցու բառարանի⁴¹: Բառիս ծագման մասին չի տրվում ոչ մի տեղեկություն: Նրա իրանական ծագումն են ապացուցում փուշտոտում առկա չիչա (այլ բարբառով՝ չաչօ) «կուրծք, պտուկ», կա և մանկական յիե «կուրծք», գիլաներենում՝ յիյ «կանացի կուրծք», լազգուլամերենում՝ չօժ զուգահեռները⁴²:

9. Յեսան

Հ. Աճառյանի ՀԱԲ-ում հետևն կամ յեսան բառի ծագման հարցը մնում է բաց⁴³:

Հայերեն յեսան «սրաքար» բառը դասական շրջանից ավանդված ունենք միայն բարդության մեջ, Աստվածաշնչի հետևյալ հատվածում. «Առ քեզ սուսեր յեսանասուր» (Ծղեկ. Ե. 1): Հետագա դարերում և բարբառներում ունենք ավանդված և պարզ արմատներով՝ յեսան, հեսան, էսան, եսան, օսան, յեսան գրություններով⁴⁴:

Որն է սրանցից ուղիղ կամ նախնական ձևը: Այս հարցին բնականաբար կարող է պատասխան տալ միայն հ.-հ. քույր լեզուներից թեկուզ մեկը, եթե ունի պահպանված զուգահեռը: Այսպիսի հնարավորություն մեզ ընձեռում են իրանականները և հատկապես պամիրյանները, որոնցում գտնում ենք՝ pisen—

37 ՀԱԲ, 4, էջ 507:

38 ՆՀԲ, Բ, էջ 944:

39 ПРС 1, с. 309.

40 Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц. Р. Арутюнян. Очерки по сравнительной лексикологии армянского языка. Ереван, 1983, с. 105.

41 ՀԱԲ, 3, էջ 629:

42 АфРС, с. 306, 313: А. А. Керимова, А. А. Мамедзаде, В. С. Расторгуева. Гильяноско-русский словарь, М., 1980, с. 132; Д. И. Эдельман. Язгуляноско-русский словарь, М., 1971, с. 61.

43 ՀԱԲ, 3, էջ 396:

44 Նույն տեղում բերված են նաև բարբառային ձևերը՝ հեսան, հէսան (Ողմ, Մոկո, Սարաղա), էսան (Ախալցխա, Կյուրասոն, Մուշ, Սասուն, Ապարան, Շիրակ): Տե՛ս նաև Ս. Ամատունի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ 175, 246:

շուգնաներենում, pəsan — յազգուլամերենում, pisun — վահաներենում, pisin — ուշաներենում և բարտանգերենում, pisan — պարսկերենում և թաջիկերենում⁴⁵,

Հայտնի է, որ հ.-հ. *p-ն սովորաբար իրանական լեզուներում պահպանվում է որպես p, որի դիմաց հայերենն ունենում է հ. ինչպես օրինակ, իրան. pāt, pitar, pānčā՝ համապատասխանաբար հայ. քնտ(f), քայր. քինգ և այլն⁴⁶, Հետևաբար, իրանական խմբի լեզուների p-ի դիմաց օրինաչափորեն հայերենում պետք է ունենանք պեսան/պիսան, փեսան/փիսան. եթե փոխառյալ է, և կամ հեսան/յեսան ձևեր, եթե ժառանգվել է հնդեվրոպական նախալեզվից, ինչպես ապացուցվել է հայագետների կողմից, հիշյալ յեսան/հեսան զուգաձևից նախնական է եղել յեսան-ը, որը միջին դարերում արդեն գրվում էր այնպես, ինչպես արտասանվում էր, այսինքն՝ հեսան⁴⁷, Ուստի միանգամայն ճիշտ է հայերեն և իրանական զուգահեռների հնդեվրոպական ծագում ունենալու հարցը Պամիրյան ձևերը, որոնք ավելի հնավանդ վկայություններ են համարվում, հայերենի հետ կենթադրում են հ.-հ. *pis-an կամ *pes-an նախաձևը:

10. իմով + սան + ն

Հ. Աճառյանը, ՀԱԲ-ում քննելով հայերեն իմովսան բառը՝ համաձայնում է Ավետիքյանի կատարած հետևյալ տարրալուծմանը՝ իմով + ս + սան, ուստի արձանագրում է. «Կազմված է իմով (իմ բառի գործիականը) ս + սան մասնիկներով. սրան իբրև ապացույց համար. իւրեանցանն. «Կախեալ իջուցին զանդամայոծն առ Յիսուս իւրեանցանն հաւատովք» (Յուդ. եօթն կաթողիկեալ թղթոց)»⁴⁸:

Նվ այսպես, հիշյալ բառերից անշատելով հայերենում անգո անն բառը, ինչպես նաև ս մասնիկը (որոնց՝ երկուսին էլ, մասնիկներ է անվանում), Հ. Աճառյանը անորոշ է թողնում դրանց ածանց կամ բառ լինելու, ինչպես նաև փոխառյալ կամ սեփական լինելու հարցը⁴⁹:

Ճիշտ հասկանալու համար իմովսան բառի կազմությունն ու նշանակությունը, կարելի է ստուգել այն իր կոնտեքստում, քանի որ գործածված է Պողոս առաքյալի թղթում՝ ուղղված հռոմեացիներին, Հունարեն $\epsilon\iota\mu\epsilon\iota\varsigma$ $\sigma\epsilon\iota\varsigma$ $\iota\sigma\alpha\iota$ և լատիներեն quod in me «որ ինչ յիս է» (=կրցածիս շափ, ինչպես աշխարհաբար ճիշտ թարգմանում են ՆՀԲ-ի հեղինակները)⁵⁰ բառերին հայերենում համապատասխանում է իմովսան, որի պատճառով էլ ՀԱԲ-ում այն բացատրվում է մոտավոր՝ «իմ տկար կարողությունս, ձեռքիցս եկած շափով»⁵¹:

Նախ, ասենք, որ բառս իսկապես առաջին մասով ճիշտ է ընկալվել. իմով-ը իմ հերանձան գործիական հոլովն է, իսկ սանն բառը գրված է որոշյալ առումով, այսինքն՝ նրանից առանձնանում է -ն որոշիչ հոգը և մնում է սան ձևը: Իսկ ի՞նչ է սան-ը: Այս սան բառի բացատրությունը տալիս է Գևորգ Դպիրն իր բառարանում. «կերպ, եղանակ, ձև, տեսակ» նշանակություններով և նրա տարբերակը սէն ձևով՝ «պես, հանգետ և նման» իմաստներով⁵²:

⁴⁵ И. И. З а р у б и н. Шугнанские тексты и словарь. М.—Л., 1960, с. 204; Он же. Бартагские и рушанские тексты. М.—Л., 1937, с. 107; Д. И. Эдельман. Язгуламско-русский словарь. М., 1971, с. 197; А. Л. Грюнберг, И. М. Стеблин-Каменский. Языки восточного Гиндикуша. Ваханский язык. Л., 1976, с. 413.

⁴⁶ Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 1, Երևան, 1940, էջ 227 (այսուհետև՝ ՀԼՊ):

⁴⁷ Հայերենի հ/յ ալտերնացիայի վերաբերյալ է. Աղայանը գրում է. «Գիտենք, որ բառալիզում յ հնչյունը միջին դարերում արդեն վերածվել էր հ-ի»: Որպես ապացույց ասվածի համար նա բերում է հօռույթայ, հաւյաւ, հինգ/յիսուս, հովառակ/յովառակ կրկնակները: Տե՛ս է. Աղայան. Գրաբարի քերականություն. 1 ա, էջ 162:

⁴⁸ ՀԱԲ, 2, էջ 242:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ ՆՀԲ, Ա, էջ 352:

⁵¹ ՀԱԲ, 2, էջ 242:

⁵² Գ. Դպիր. Բառարան պարսկերեն, էջ 467, սան բառի տակ:

Այսպիսով, պարզ է դառնում իմովաան-ն բառի կազմությունը՝ իմով և սան մասերից, որի պատճառով էլ այն թարգմանվելու է «իմ ձևով, ինձ պես, իմ կերպով»։ Այս սան-ը պարսկերեն զան-ի տարբերակն է, որը ծանոթ է մեզ հայերենի բազմաթիվ բարդություններում, ինչպես օր. սրբազան, բազմազան, այլազան, զանազան, հիզան և նման այլ բառերում։ այն փոխառություն է հին պարսկերենի zana «կերպ, տեսակ» բառից⁵³, որի տարբերակն է san-ը, օրինակ, պարսկերենում ասում են՝ beci san «ինչ կերպ», zinsan «այսպես» և այլն։ նման z>s հնչյունափոխություն կատարվել է բազմաթիվ բառերում, ինչպես օր. zēndan>sendan «զնդան» և այլն⁵⁴։

11. դուռ, դուռ

2. Աճառյանը, ՀԱԲ-ում բերելով աղաբոյ «մի տեսակ գոհար կամ մարգարիտ» բառը, որ գտնում ենք գործածված Ք. Պատկանյանի հրատարակած Մ. Խորենացուն վերագրված Աշխարհացոյցի տեքստում, իրավացիորեն նշում է նրա արաբերեն ծագում ունենալը՝ durrā, հոգն. durr, durar «մարգարիտ» բառից⁵⁵։ Միաժամանակ նա նշում է աղաբոյ-ի աղավաղված լինելը, ինչպես նաև բառարաններից դուրս մնալու հանգամանքը (հավանաբար խաթարված լինելու պատճառով)⁵⁶։

Արաբերեն durr-ից ոչ խաթարված դուռ, դուռ, դոռ, դուռ, դուրք ձևերն առկա են հայոց բարբառներում և միջնադարյան գրականության մեջ։ Այսպես օրինակ, Սայաթ-Նովան խաղերից մեկում գործածում է դուրր-ուստադ «մարդարտի վարպետ» արտահայտությունը⁵⁷։ Բառս դոռ ձևով գործածական է եղել նաև Նոր Զուղայի բարբառում, ինչպես իր հաշվետվումարում գործածում է հայ վաճառական 2. Տեր-Դավթյանը⁵⁸։ Մոկսի բարբառում (նաև Ղզլարի) բառս դարձել է դուռ, ինչպես գտնում ենք ժողովրդական խաղիկներում։ «Մըաջ իմ սըրտին լալ ու դուռ ի» կամ՝ «Մաճկալը մաճին, դուռն ընկաճին»⁵⁹։

Եվ այսպես, ՀԱԲ-ում աղաբոյ անկանոն ձևի կողքին իրենց օրինական տեղն են գրավելու հայերենի դուռ, դուրք, դուռ, դոռ ձևերը, որոնք դուրս են մնացել բառարաններից։

12. ֆան

Ելնելով վիմական արձանագրություններում հանդիպող ֆան բառի բովանդակությունից, որ գործածվել է բազմիցս ֆան-ակից ձևով, ինչպես օրինակ՝ «Զիմ կուղական, որ ի կօշկակարոցին ֆանակից է», կամ՝ «Կուղական, որ շինեցի, ներքին դեհն, ֆանակից է Աւետեացն» և այլն, 2. Աճառյանը միանգամայն ճիշտ է որոշել նրա «սահման» նշանակությունը (թեև զգուշաբար դնում է այն հարցականով)⁶⁰։ Պետք է ուրախությամբ արձանագրել, որ իրանական լեզուների զուգահեռները հաստատում են այս կարծիքը։ Այսպես, փուլտուն ունի kâna «եզր, ափ, երիզ», որից նաև kanar «եզր, ափ», kanara «կուլմ», պարսկերենի kânar և keûar «եզր, ափ, կողք, կից, ծալը» բառերը, որոնք էլ հիմք են տալիս ենթադրելու ընդհանուր աղբյուր⁶¹։

53 ՀԱԲ, 2, էջ 78,

54 Տե՛ս Գ. Դ պ ի ր. Բառարան պարսկերեն և ПРС, 1, 2:

55 ՀԱԲ, 1, էջ 81, տե՛ս նաև APC, c. 314:

56 ՀԱԲ, 1, էջ 81:

57 Ս ա յ ա թ-ն ո վ ա, Երևան, 1945, էջ 150: Բառարանում սխալմամբ գրված է դյուռ—աճ՝ էջ 179:

58 Զուղայիցի 2. Տեր-Դավթյանի հաշվետվումարը, էջ 484:

59 Հայ շինականի աշխատանքային երգեր. Բ, Երևան, 1937, էջ 65, 179:

60 ՀԱԲ, 4, էջ 551:

61 АФРС, c. 559, 692, ПРС, 2, c. 356—357.

13. ֆաղեայ/ֆոդեայ

Հայերեն ֆաղեայ կամ ֆոդեայ «կախարդ, հմայող, աստղագուշակ» բառի ծագման հարցը առ այսօր մնացել է հանելուկային: Ոմանք նույնիսկ հարցականի տակ են դնում ֆաղեայ/ֆոդեայ բառի գոյությունը հարցը հայերենում: Այդպես են վարվել ՆՀԲ-ի հեղինակները նույնացնելով ֆաղեայն ֆաղդեայ-ի հետ⁶², ՆՀԲ-ի հեղինակներին է հետևել նաև Հ. Աճառյանը, գրելով. «նույնն է ֆաղդեայ բառի հետ, որ միևնույն նշանակություն ունի. դ և լ ձայնափոխությունն անսովոր է»⁶³: Հ. Աճառյանն այնուամենայնիվ այս նույնացման հարցում կասկածում է ոչ ճիշտ հնչյունական անցումների տեսանկյունից: Իսկապես, հայերենը շուրջ նման հնչյունական անցումների գեթ մեկ այլ օրինակ է, որը հիմք տալու ընդունելու ֆաղեայից ֆաղդեայ կամ ընդհակառակը առաջանալու վարկածը: Ն. Մառը կարծում է, որ ֆաղեայ-ն կարող է առաջացած լինել Խալդիի անունից⁶⁴, ինչ դարձյալ անընդունելի է: Ինչու՞ պիտի Խալդի-ն դառնար ֆաղեայ, երբ հայ հեթանոսական դիցակաճառում գրեթե հետք չեն թողել ուրարտական դիցանունները և կամ խոտիական կրոնի, սնոտիապաշտության տարրեր չեն նշարվում: Այստեղ նույնպես առկա է վերևում նշվող հնչյունական անցման խոշորագույնը: Բացի այս հանգամանքները, հարկ ենք համարում ընդգծել նաև հայ մատենագրության մեջ հիշյալ երկու բառերի՝ ֆաղեայ և ֆաղեայ/ֆոդեայ և այլ հմայական տերմինների կողք-կողքի հիշատակվելու փաստը, որն ապացույց է դրանց ոչ նույն, այլ տարբեր մասնագիտություններ լինելու: Այսպես՝ «Քանզի ֆաղդեացին և ֆոդեայն աղանդոյ է անուն», «Դիթութեամբ և նմայիւք և ֆաղեութեամբ...», «Առ կախարդս և ճարցուկս և ֆոդեայս և վճուկս» և այլն⁶⁵:

Հայերենում ֆաղեայ կամ ֆոդեայ-ի ծագման հարցում նոր լույս է սրբառում իրանական լեզուներից փոխառված պահպանված զուգահեռը. *koday* «կախարդ, հմայող», հոգն. *kōda*, *kōdi* «կախարդություն, հմայություն», գործածական են նաև անվանակերտ -*gar* կամ -*gad* ածանցներով կազմված ձևեր, ինչպես՝ *kodgar*, *kodgad* «կախարդ, հմայող» նշանակություններով իսկ պարսկերենն իր *konda* հնչմամբ հեռու է հայերենի քաղեայ/քոդեայ, հնչումից⁶⁶:

14. խնն-ոյ(f) խնջ-ոյ(f)

ՀԱԲ-ում բերելով հայերեն խննոյ/խնջոյ (կամ խննոյf/խնջոյf) «ուրախ կերուխում, խրախճան, սեղան ուրախության, կոչումը, ուրախ հանդես, ամբոխ» բառի ծագման վերաբերյալ եղած կարծիքները, Հ. Աճառյանը մնում է ձեռնպահ: ՆՀԲ-ի հեղինակները հիշատակում են թուրքերենի խննախընն «խառնամբոխ», Ն. Մառը կապում է խնդալ բառի հետ, Հյունոյարպեյանյանը պարսկերենի խոնջէ «սեղանիկ» բառից է ենթադրում⁶⁷: Գ. Ջահուկյանը բավական զգուշ ձևով փորձում է կապել խննդ բառի հետ հ.՝ **khendh*—«ուրախություն» արմատից, իսկ «Ակնարկներ հայերենի համեմատական բառագիտության» գրքում դնում է *khendh*—ձևից⁶⁸:

62 ՆՀԲ, Բ, էջ 971, 1001, 1019:

63 ՀԱԲ, 4, էջ 566—567:

64 ՀԱԲ, 4, էջ 567, իսկ մեկ այլ առիթով միևնույն արմատից է համարում նաև ֆալթվիլի, ֆաղդեացի բառերը ևս:

65 ՆՀԲ, Բ, էջ 971, 1001, 1019: Ի դեպ, ֆաղեայ/ֆաղդեայ նույնացմանը կասկածով է վերաբերվել նաև Հ. Հյուբշմանը, ինչպես գրում է Հ. Աճառյանը ՀԱԲ-ում (տե՛ս հ. 4, էջ 566):

66 АФРС, с. 700, ПРС, 2. 359.

67 ՀԱԲ, 2, էջ 381, ՆՀԲ, Ա, էջ 955:

68 Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 14, 61—62.

10 «Հանրես», № 2

Մեզ թվում է, պետք էր կապել այն պարսկերենի խոսակցական լեզվում զոյություն ունեցող *xenc* 1. «ուրախություն, կերուխում, արեցողություն» 2. «շահ, օգուտ»⁶⁹ բառի հետ, որի առաջին նշանակությունների հետ հայերենը համաձայն է (ինչպես նաև արտասանությամբ)։ Թերևս ձայնավորների անհամապատասխանությունը հիմքեր չտա անմիջապես պարսկերենից ենթադրելու փոխառությունը, սակայն ընդհանուր ակունքի դեպքում կարելի է ենթադրել *xunc—արմատը, ելնելով նաև հայերենի սեռական խնճուղի ձևից։

15. ջալ

ՀԱՐ-ում հայերեն ջալ բառի ծագումը չի որոշված. որոշ չափով ետին պլան է մղված նաև նրա բուն նշանակությունը, որն է «մարդկանց խումբ, հավաքույթ, ջոկ», մինչդեռ որպես առաջնային տրված է «մեռելի վրա լացողների խումբ» կամ «բազմությամբ լաց, ողբ», որից էլ ջալել «խմբվելով մեռելը ողբալը»⁷⁰ նշանակությունները։ Բառս հայերենին պիտի անցած լինի պարսկերենից, ուր գտնում ենք *gīyl* ձևով, որի նշանակությունն է, ըստ Գ. Դպիրի բառարանի՝ «գրոհ մի բազմութեան մարդկան» (ի դեպ, պարսկերենում գրված է ջիլ հնչապատկերով)⁷¹։

Թեև ջալը ունի արաբական ծագում, սակայն իմաստների մոտիկությունը պարսկերենի հետ ենթադրել է տալիս փոխառության պարսկական ալունք։

16. խոնաստան

Հայերենում խոնաստան թափափորական պալատ կամ ատյան, տուն» բառը գործածված ենք գտնում միայն մեկ անգամ Եղիշիի «Վարդանանց պատմությունում»⁷²։ Առ այսօր չի ճշտված նրա ծագումը. փոխառյալ է, թե՛ հայկազմ։ Իրանական լեզուներում նման ձևի չենք հանդիպում, թեև առանձին-առանձին գտնում ենք *խոն*-ը «տուն», *և՛* —ստան-ը «տեղ, հանգրվան» նշանակություններով։ ՀԱՐ-ում բերված են բառիս ստուգաբանության վերաբերյալ արված փորձերը, որոնցից մի քանիսը մերժելի են, ինչպես՝ Զախախյանի բառարանը նշում է «պարսկերեն բառ»՝ առանց ցույց տալու աղբյուրը, «Առ-ձեռն բառարանը», Փորթազալ փաշան առաջարկում են *xunistān* «օրհնյալ», իսկ Դե Լաբարդը՝ *xān* «իշխան» + *istan*, Հ. Հյուբշմանը՝ պհլ. **xvānstan*-ից, առանց այլ բացատրությունների, որի համար էլ իրավամբ Հ. Աճառյանը կասկածելով գրում է. «Անտարակույս է, որ բառս փոխառյալ է պահլավերենից. բայց հիշյալ պհլ. անհայտ ձևը ոչինչ չի ասում»⁷³։ Թեև ճիշտ, բայց պակասավոր է նաև Թիրաքյանի ենթադրությունը՝ պարսկերենի, պահլավերենի *xān*, *xāna* «տուն» բառից⁷⁴, որը Հ. Աճառյանի կողմից դժբախտաբար անտեսվել է, հավանաբար ձայնավորների տարբերության պատճառով։ Այժմ, երբ հայտնի են բազմաթիվ իրանահայ ընդհանրություններ, ուր իրանական *a*-ի դիմաց հայերենն ունի *-n*- ինչպես՝ *ավեստ*. *gav*-a «կյանք», *gav* «ապրել» : հայ. գոյ, պհլ. *xvasak* «ապատ, պայմանական հողատիրություն» : հայ. խոստակ, իրան *xvarh* : հայ. խառհ-ի որհ-խոն «կերակուր, ճաշ» և այլն, արդեն ապացուցված կարելի է համարել պահլավերենի *xāna*-ի դիմաց հայերեն խոն-ի համապա-

69 ПРС, 1 с. 568: *Sb'u* նաև Դ. Բ. Джаукян, Л. А. Сараджева. Ц. Р. Арутюнян. Очерки по сравнительной лексикологии армянского языка, с. 76.

70 ՀԱՐ, 4, էջ 121:

71 Գ. Դպիր. Բառարան պարսկերեն, էջ 284:

72 Եղիշիի Պատմություն Վարդանանց. Տիփիս, 1879, Երկրորդ եղանակ, էջ 56:

73 ՀԱՐ, 2, էջ 392—393:

74 Հ. Թիրաքյան. Արիահայ բառարան, էջ 182: ՀԱՐ, 2, էջ 392—393:

տասխանությունը, որին ավելացել է -ստան-ը, ինչ կարող էր տեղի ունենալ և՛ իրանական, և՛ հայկական հոդի վրա:

17. պուտ

ՀԱՐ-ում չի պարզարանվում նաև հայերեն պուտ «կաթիլ, կետ, պիսակ, բիծ, մի քիչ, մի փոքր» բառի ծագման հարցը⁷⁵:

Պուտ-ն ավանդված է միջնագարյան հայ գրականության մեջ, ինչպես նաև ծանոթ է բարբառների մեծ մասին: Այսօր էլ ժողովրդախոսակցական լեզվում կենդանի է այն պուտ, պուտ-պուտ, պտիկ, պտիկ-պտիկ, իսկ արևատահայ սիշաբք բարբառներում (Արարկիր, Ծվգոկիա, Խարրերդ, Ախալցխա, Պոլիս, Գա-Նիրք, Բյուժանիա) նաև պաուր, պաուր, պաուիկ ձևերով, օրինակ, մի պուտ քուր, մի պուտ արուն, մի պուտ կաթ, պուտ-պուտ կեանքով և այլն: Անշուշտ, բառս իրանական ծագում ունի, ինչպես ցույց է տալիս փուշտու լեզվում պահ-պանված նրա զուգահեռը puš կամ ածանցավոր pušuy, potay «փոքր, կտոր, փոքր առարկա, փշրանք, թզուկ» նշանակություններով⁷⁶:

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Н. А. МКРТЧЯН

Резюме

«Этимологическо-корневой словарь армянского языка» Р. Ачаряна вышел в свет более полувека назад (в 1926—1935 гг.), но до настоящего времени остается своеобразной незаменимой лингвистической энциклопедией для арменоведов и историков армянского языка. Но не все этимологии, представленные маститым ученым в этом словаре, можно безоговорочно принять. На наш взгляд следует пересмотреть представление о происхождении ряда слов армянского языка на основании новых достижений науки. В статье обсуждается 17 слов, уточнение которых представляется необходимым.

75 ՀԱՐ, 4, էջ 103, ԺՀԲԲ, 4, էջ 224, Ս. Ամատունի. Հայոց բառ ու բան, էջ 566:
2. Անառիկան. Գաղառական բառարան, էջ 926:

76 АФРС, с. 187: